

Նախկին Ծանուցում

«Քրեական վերաքննիչ դատարանի
նախագահ պրն.՝ Տ. Սահակյանին

Պատճեն

«Կոտայքի մարզի ընդհանուր
իրավասության դատարան

Պատճեն

«դատախազություն

Դատապարտյալ Մորես Արծրունու Հայրապետյանից

(Հասցե՝ Կոտայքի մարզ, գ.

Արզական, Շինարարների

փող., 2-րդ նրբ., տուն 11

Հեռախոս՝ 0226 6-17-68)

Թիվ 66101210 քրեական գործով Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության
դատարանի 2010թ.-ի նոյեմբերի 29-ի դատավճռի դեմ

ՎԵՐԱՔՆՆԻՉ ԲՈՂՈՔ

Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը դատավճռով
29.11.2010թ. ՀՀ քր. օր. 308 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության
կատարման մեջ մեղավոր ճանաչեց ինձ և իմ նկատմամբ պատիժ նշանակեց
ազատազրկում 1 (մեկ) տարի 11 ամիս ժամկետով: ՀՀ քր. օր. գրքի 70-րդ հոդվածի
կարգով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել և սահմանել է
փորձաշրջան 2 (երկու) տարի ժամկետով:

Վերը նշված պատիժը դատարանը նշանակել է իմ նկատմամբ այն բանի
համար, որ ես հանդիսանալով ՀՀ ոստիկանության Չարենցավանի բաժնի քրեական
հետախուզության բաժանմունքի օպեր լիազոր, ՀՀ ոստիկանության Չարենցավանի
բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի պետ Աշոտ Հարությունյանի
բանավոր պահանջով, 2010թ.-ի ապրիլի 13-ին ժամը 10:00-ի սահմաններում,
ոստիկանության Չարենցավանի բաժին բերման եմ ենթարկել գողության մեջ
կասկածվող Վահան Խալաֆյանին, վերջինիս վերաբերյալ գրառում չեմ կատարել Ա.
Հարությունյանի ցուցումով: Ա. Հարությունյանը իր աշխատասենյակում Վահան
Խալաֆյանի նկատմամբ բռնություն կիրառելու սպառնալիքով ստիպել է նրան
ընդունել գողություն կատարելու նրա մասնակցությունը, կիրառել է բռնություն, որին
ես չեմ միջամտել: Այնուհետև դարձյալ Աշոտ Հարությունյանի պահանջով նույն օրը,
ժամը 16:55-ին լրացրել եմ Վահան Խալաֆյանին բաժին բերման ենթարկելու

ՀՀ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԲՈՂՈՔԻ
ԴԱՏԱՐԱՆ
Գրքի N 24/0078/01/10
24 12 2010թ.

վերաբերյալ արձանագրություն: Իսկ ժամը 17:00-ի սահմաններում երբ Աշոտ Հարությունյանը ՀՀ ոստիկանության Չարենցավանի բաժնի պրոֆիլակտիկայի բաժանմունքի պետի աշխատասենյակում իմ և քրեական հետախուզության բաժանմունքի ևս երկու օպեր լիազորներ, մայորներ՝ Գարիկ Դավթյանի և Գագիկ Դազարյանի ներկայությամբ շարունակել է Վահան Խալաֆյանի նկատմամբ բռնություն գործադրել, դարձյալ ես եմ միայն մեղավոր, որ չեմ կանխել այդ գործողությունները և կարծես, միայն ես էի պարտավոր հավատարիմ մնալու ոստիկանի՝ իմ երդմանը, պաշտպանելու Վ. Խալաֆյանին Ա. Հարությունյանի բռնություններից:

Տվյալ քրեական գործով միայն ես եմ իմ մարդկային խղճի ու ազնվության պահանջով տվել ճշմարտացի ցուցմունքներ և նպաստել արդարադատության իրականացմանը:

Այդ իսկ պատճառով էլ գտնում եմ, որ իմ նկատմամբ նշանակված պատիժը չի բխում օրենքից, այն չհիմնավորված և խիստ է: ՀՀ քր. օր. 61 հոդվածի 2-րդ մասը սահմանում է «պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով»:

Իմ պարագայում թեև դատարանը դատավճռում նշել է իմ դրական բնութագիրը, տես դատավճիռ (46-47 էջ) և պատասխանատվությունն ու պատիժը որպես մեղմացնող հանգամանք նաև նախաքննության ու դատաքննության ժամանակ տված ցուցմունքները, անկեղծորեն զղջալս, սակայն պատիժ սահմանելիս դրանք մնում են սոսկ որպես փաստեր, արտոնագրված դատավճռում: ՀՀ քրեական օրենսգրքի 64 հոդվածը սահմանում է օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու հիմքերը՝ դրանք են հանցավորի դերը, նրա վարքագծի և հանգամանքների հետ կապված փաստերը, նրա անձի հանրության համար վտանգավորության աստիճանը, ինչպես նաև հանցագործության բացահայտմանը ակտիվորեն մասնակցելը և աջակցելը, որի առկայությամբ կարող է նշանակվել քրեական օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված նվազագույն չափից ավելի մեղմ պատժատեսակ:

Իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 62 հոդվածը մեղմացնող հանգամանք է դիտում առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործություն կատարելը դեպքերի պատահական զուգորդմամբ, հանցագործության բացահայտմանը

նպաստելը և մյուս մասնակիցներին ներկայացնելը, հանցագործությունը ծառայողական կամ այլ կախվածությամբ կատարելը:

Քրեական օրենսգրքով նախատեսված բոլոր հիմքերը կան իմ պարագայում:

Դատաքննությամբ հիմնավորված է որ Ա. Հարությունյանը հանդիսանում էր իմ անմիջական պետը, ես կատարել եմ ինձ համար պարտադիր սահմանված կարգով պետի կարգադրությունները:

Ես չեմ հակադրվել իմ պետին որպեսզի վերջինս ինձ չհամարի քննությանը խոչընդոտող և իր աշխատանքները կազմալուծող:

Ի վերջո Վ. Խալաֆյանի լարվածությունը իր գազաթնակետին հասավ պրոֆիլակտիկայի պետ Կամո Միրունյանի աշխատասենյակում, երբ ժամը 17:00-ի սահմաններում այնտեղ մտավ Ա. Հարությունյանը, որտեղ էին նաև մայրերն՝ Գ. Ղազարյանն ու Գ. Դավթյանը: Ինչպես եղավ, որ դատարանը միայն իմ պարտականությունը համարեց այն որ ես Ա. Հարությունյանի գործողությունները պետք է կանխեյի, որպեսզի Վ. Խալաֆյանը դրա հետևանքով ինքնավնասումներ չկատարեր: Մյուս ամբաստանյալները եթե հնարավորություն չունեին կանխելու բռնությունը, ապա իմ հնարավորությունը նույնպես շատ քիչ էր Ա. Հարությունյանի ձեռքը բռնելու:

Սակայն ես խորապես ցավ ու ափսոսանք զգալով երիտասարդ տղայի մահվան համար ինձ մեղավոր եմ ճանաչել և զղջացել, որ ընդհուպ մինչև ֆիզիկական ուժ գործադրելով Ա. Հարությունյանի նկատմամբ՝ թույլ չէի տա նման հետևանքի առաջացում, եթե կանխատեսեի որ Վ. Խալաֆյանը նման ծայրահեղ միջոցի կդիմի: Այդ ամենին ներկա էին ինձանից կոչումով ու տարիների փորձով լցված օպերներ, ովքեր նույնպես ոչինչ չարեցին արգելել Ա. Հարությունյանին՝ բռնություն կիրառելուն, սակայն դատարանի կողմից արդարացվեցին, քանի որ իրենք իրենց մեղքը չընդունեցին ու հայտարարեցին, որ մեկ երկու ապտակ են տեսել ու հնարավորություն չեն ունեցել կանխելու ինչպես Ա. Հարությունյանի գործողությունները, այնպես էլ Վ. Խալաֆյանի ինքնավնասումները:

Նախաքննությունն ու դատաքննությունը ողջ ժամանակաշրջանը ինձ համար ծանր փորձաշրջան էր ինձ ուղղվելու և հետևություններ անելու համար, ժամանակաշրջան այլևս անհրաժեշտ չի, այդ իսկ պատճառով գտնում եմ իմ նկատմամբ կիրառելի է ՀՀ քր. օրենսգրքի 72 հոդվածը որը սահմանում է առաջին անգամ ոչ մեծ ծանրության կամ միջին ծանրության հանցանք կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե նա հանցանք

կատարելուց հետո կամովին ներկայացել է մեղայականով աջակցել է հանցագործությունը բացահայտելուն:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քր. օր. 376, 378, 380¹ հոդվածներով

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ

Բեկանել Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 29.11.2010թ. դատավճիռը՝ իմ պատժի մասով, քանի որ դատավճռով նշանակված պատիժը չի համապատասխանում կատարված հանցանքի ծանրությանը իմ անձին և իմ նկատմամբ կիրառել ՀՀ քր. օր. 72 հոդվածի պահանջները:

Դատապարտյալ՝



Մ. Հայրապետյան

«27» 12 2010թ.